ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 21.07.2026թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Մինասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Արսենյան

Նելլի Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխան են,** բացառությամբ «ՆՕՐԴ» ՍՊԸ-ի, «Բոնանզա» ՍՊԸ-ի և «ԼԵՎՄԵԴ» ՍՊԸ-ի կցած հայտերի, մասնավորապես՝

- «ՆՕՐԴ» ՍՊԸ-ի կցած հայտում 17-րդ և 20-րդ չափաբաժինների մասով բացակայում է հրավերով պահանջվող ավտորիզացիոն նամակը, ինչպես նաև Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 1-ին, 2-րդ, 17-րդ, 20-րդ և 28-րդ չափաբաժինների համար չեն լրացվել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ համաձայն հրավերի պահանջների:
- «Բոնանզա» ՍՊԸ կցած հայտում բացակայում է լիազորագիրը:
- «ԼԵՎՄԵԴ» ՍՊԸ կցած հայտում Հավելված 1-ում /Դիմում-հայտարարություն/ ծածկագրերը, կազմակերպության անվանումը լրացված են սխալ, ինչպես նաև նշված չէ ղեկավարի պաշտոնը: Հավելված 1.3-ում ծածկագիրը լրացված է սխալ: Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրության բաժնում չեն լրացվել հրավերով պահանջվող բոլոր տվյալները: Մասնավորապես, բացակայում են ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

<u>Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և կցել շտկված փաստաթղթերը:</u>

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի հունիսի 24-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Մինասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Արսենյան

Նելլի Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն